Սերգեյ Դովլաթով

Մերոնք

6

ԳԼՈՒԽ ՏԱՄՆՄԵԿԵՐՈՐԴ

— Մեր աշխարհն անհեթեթ է, — ասում եմ կնոջս, — ու մարդուս թշնամիներն իր տնեցիներն են:

Կինս բարկանում է, թեև կատակով եմ ասում: Ի պատասխան լսում եմ.

— Քո թշնամիները էժանագին պորտվեյնն ու շիկահեր լրբերն են:

— Ուրեմն, — ասում եմ, — ճշմարիտ քրիստոնյա եմ: Քանզի Քրիստոսն ասել է՝ սիրիր թշնամիներիդ...

Այս խոսակցությունները շարունակվում են քսան տարի: Արդեն քսան տարի...

Ամերիկա եկել էի բաժանվելու երազանքով: Բաժանվելուս միակ պատճառը կնոջս ծայրաստիճան անխոռվությունն էր: Նրա հանգստությունը անսահման էր:

Ապշեցուցիչ է՝ ինչպես կարող են մեկ մարդու մեջ գոյակցել անխոռվությունն ու հակակրանքը...

Ծանոթացել ենք վաթսուներեք թվականին: Այսպես եղավ:

Ես առանձին մուտքով սենյակ ունեի: Լուսամուտները նայում էին աղբանոցին: Գրեթե ամեն երեկո հյուրեր էի ունենում:

Մի անգամ արթնացա գիշերվա կեսին: Հայացքով անցա ընկած բազկաթոռի ու սեղանին մնացած կեղտոտ ամանեղենի վրայով: Հիշեցի, որ երեք անգամ գնացել էինք օղու: Հյուրերիցս մեկն արտահայտվեց այսպես.

«Գնանք Ելիսեսսկի: Երեք հարյուր մետր մինչև այնտեղ, ետդարձը՝ գրեթե նույնքան»...

Սկսեցի մտածել թափթփված սենյակում նախաճաշելու մասին:

Հանկարծ զգացի, որ մենակ չեմ: Առնարանի ու ռադիոլայի միջև դրված բազմոցին մեկը քնած է: Շրշյուն է լսվում, հոգոցներ: Հարցրի.

— Դուք ո՞վ եք:

— Ենթադրենք՝ Լենան, — կանացի ձայնն անակնկալ խաղաղ էր:

Փորձեցի մտաբերել: Լենա անունը այնքան էլ հաճախ չի պատահում: Մեր ծանոթների մեջ գերակշռում էին Տամարաներն ու Լարիսաները: Հարցրի.

— Իսկ ինչպիսի՞ն է ձեր կարգավիճակը, Լենա: Պարզ ասած՝ ձեր սոցիումի էռ ակտումը:

Լռություն տիրեց: Հետո անխռով կանացչի ձայնն ասաց .

— Ինձ մոռացել է Գուրեւիչը . . .

Գուրեւիչը գրքի շուկայի իմ ծանոթներից էր: Երկու տարի անց նրան նստեցրին:

— Ինչպե՞ս թե մոռացել է:

— Գուրեւիչը հարբեց ու տաքսի կանչեց . . .

Սկսեցի աստիճանաբար մտաբերել:

— Դուք դարչնագույն զգեստո՞վ էիք:

— Թերեւս, այո: Զգեստս կանաչ է: Գուրեւիչը պատռեց: Քնել եմ ինչ-որ մեկի զինվորական վերնաշապիկով:

— Դա իմ զինվորական վերնաշապիկն է: Բանակից մնացած մասունք: Գնալիս կհանեք:

— Այստեղ ինչ-որ շքանշան կա . . .

— Դա, — ասում եմ, — սպորտային կրծքանշան է:

— Ծակծկում էր . . . Չէր թողնում քնեմ . . .

— Նրան, — ասում եմ, — կարելի է հասկանալ . . .

Վերջապես հիշեցի այդ կնոջը: Նիհար, գունատ, մոնղոլական աչքերով:

Արդեն լուսացել էր:

— Շրջվեք, — խնդրեց Լենան:

Քիթմռութս ծածկեցի լրագրով: Ակուստիկան անմիջապես փոխվեց: Օրիորդը գնաց դռան կողմը: Դատելով քստքստոցից՝ իմ վելվետե հողաթափերով:

Վերմակի տակից դուրս եկա: Օրն արտառոց ու խորհրդավոր մենկարկ էր առել:

Երկուսս՝ իմ նեղ միջանցքում: Բավական պարարտ ազդրերից փաթաթած սրբիչը: Նրա ծնկներին չհասնող զինվորական վերնաշապիկը . . .

Անցանք գրեթե իրար հպվելով: Ես մտա լոգարան: Ցնցուղից հետո իմ կյանքում հարաբերական հստակություն է ուրվագծվում:

Դուրս եկա երեք րոպեից . սեղանին սուրճ է, թխվածքաբլիթներ, ջեմ . . դոնդողածածկ ձուկ . . .

Լենան արդեն հագնվել էր: Օձիքի անտիկ բաղվածքը՝ Ֆիմա Գուրեւիչի անսանձ զգացմունքայնության հետքը, սազում էր նրան:

— Իրոք, — ասում եմ, — կանաչ է . . .

Նախաճաշի ընթացքում զրուցեցինք դեսից-դենից: Մթնոլորտն անկաշկանդ էր ու անգամ հաճելի: Եթե ընդունեի, որ աշխարհը փոքր-ինչ շեղվել է սովոր հունից...

Լենան հավաքեց իրերը, հագավ կոշիկներն ու ասաց.

— Ես գնացի:

— Շնորհակալ եմ հաճելի զրույցի համար:

Ու հանկարծ.

— Կգամ վեցից հետո:

— Լավ, — ասացի...

Հիշեցի այս դեպքը: Ընկերոջս հետ վերադառնում էինք բաղնիքից: Մի միլիցիոներ կանգնեցրեց: Լարված հարցրինք.

— Ի՞նչ է պատահել:

Իսկ նա թե.

— Չե՞ք հիշում, թե երբ է հրատարակվել Ախմատովայի «Վարդարանը»:

— Հազար ինը հարյուր տասնչորս թվականին: «Գիպերբորեյ» հրատարակչություն, Սանկտ Պետերբուրգ:

— Շնորհակալություն: Կարող եք գնալ:

— Ո՞ւր:

— Ուր ուզում եք, — պատասխանեց, — ազատ եք:

Այն ժամանակ ինձ ապշեցրել էր առօրեականության ու ցնորքի նման խառնուրդը: Հիմա էլ մոտավորապես նույն զգացողությունն ունեցա:

— Կգամ, — ասում է, — վեցից հետո...

Իսկ ես ժամադրված էի հինգն անց կեսին: Ընդ որում, ոչ թե կնոջ, այլ Բրոդսկու հետ: Իսկ հետո պիտի գնայինք ինչ-որ մեկի թեկնածուականի բանկետին:

Զանգում, խափանում եմ ժամադրությունը: Բանկետն արհամարհում եմ: Տաքսիով սլանում եմ տուն: Հարկավոր է, մտածում եմ, երկրորդ բանալին պատվիրել:

Սպասում եմ: Գալիս է վեցի մոտերքը: Պայուսակից հանում է պահածո, ձու, մինտայ:

— Դուք, — ասում է, — առայժմ ձեր գործերով զբաղվեք: Իսկ ես ընթրիք կպատրաստեմ:

Մի վայրենի միտք անցավ գլխովս: Իսկ գուցե ինձ շփոթո՞ւմ է ինչ-որ մեկի հետ: Իր համար թանկ ու սիրելի մեկի հետ: Գուցե աշխարհն արդեն այդտե՞ղ է հասել իր խելագարության մեջ...

Ընթրեցինք: Ես նստեցի աշխատելու: Լենան լվաց ամանեղենը: Միացրեց հեռուստացույցը:

Հեռուստացույցս չէր աշխատում արդեն երկու տարի: Իսկ այդ ժամանակ աշխատեց նորից պես . . .

Սկսեցի փոփոխություններ նկատել: Լվացարանի մոտ հայտնվեց արտասահմանյան սրվակներ: Պահարանումս տեղ գրավեց զամշե վերարկուն: Սառնարանի կողքին հայտնվեցին դարչնագույն երկարաճիտ կոշիկներ: Բնակարանի շունչն անգամ փոխվեց . . .

Արդեն ուշ երեկո էր: Լենան ասաց .

— Թե՞յ, թե՞ սուրճ:

— Թեյ:

Թեյը խմեցինք ինչ-որ պրյանիկներով: Մի երեսուն տարի պրյանիկ չէի կերել . . .

Տեսնեմ՝ ժամը մեկն է: Կարծես թե պառկելու ժամանակն է: Լենան ասաց .

— Խոհանոցում մի քիչ սպասեք:

Սպասում, ծխում եմ: Կարդացի անցած երեքշաբթի օրվա լրագիրը: Վերադարձա սենյակ՝ քնած է: Նույն բազմոցին: Միայն զինվորական վերնաշապիկի փոխարեն վարդագույն գիշերանոց է հագին:

Պառկեցի: Լսողությունս լարեցի՝ ոչ մի ձայն: Գոնե կոկետությունից գեթ մի շարժում աներ . . .

Մի տասը րոպե սպասցի ու քնեցի:

Առավոտը նախորդի կրկնությունն էր: Երկուսի համար նեղ միջանցք, ցնցուղ ու կաթով սուրճ . . . .

— Այսօր, — ասում է, — կուշանամ: Կգամ տասնմեկից հետո: Այնպես որ՝ չանհանգստանաք . . .

Գնացի խմբագրություն: Այնտեղից ժուռնալիստների միության բար: Մի շվեդուհու հետ ծանոթացա, ինձ հյուրանոց էր կանչում: Անվերջ կրկնում էր .

— Կազակ, ինձ ռուսական օղի լցրու . . .

Ընկերներս ընդհատակյա համերգի էին գնում: Ինչ-որ ավանգարդիստի լսելու: Ավանգարդիստն էլ, եթե կարելի է այդպես արտահայտվել՝ բավական արտասովոր մեկն էր: Թավշութակը պառկած էր նվագում . . . Մի խոսքով՝ գաղթակողությունները բազում էին: Իսկ ես շտապում էի տուն: Ժամ առաջ ուզում էի հասնել գժանոցս:

Երբ տասնմեկից հետո եկավ, ասացի .

— Լենա, եկեք խոսենք: Դրա կարիքը, ինձ թվում է, կա: Անհասկանալի բաներ են կատարվում: Ես մի քանի նուրբ հարց ունեմ: Կարելի՞ է առանց այլեւայլի:

— Լսում եմ ձեզ:

Իսկ դեմքը հանդարտ է, ինչպես ամբարտակը: Հարցնում եմ.

— Գուցե դուք ապրելու տեղ չունե՞ք:

Օրիորդը նեղացավ: Ավելի ճիշտ՝ կարծես թե զարմացավ:

— Ո՞վ ասաց: Ես Դաչնոյեում բնակարան ունեմ: Իսկ ի՞նչ:

— Ըստ էության, ոչինչ... Ինձ թվաց... Ես կարծեցի... Այդ դեպքում մի հարց էլ: Զուտ ընկերական... Հազար ներողություն... Գուցե հավանո՞ւմ եք ինձ:

Ճնշող լռություն տիրեց: Զգացի, որ կարմրում եմ: Վերջապես ասաց.

— Ձեր նկատմամբ բողոք չունեմ:

Այդպես էլ ասաց՝ բողոք չունեմ:

Տիրած լռությունն էլ ավելի ճնշող էր: Ինձ համար: Լենան հանդարտության մարմնացում էր: Հայացքը սառն ու կոշտ, ինչպես հնառճ ճամպրուկի մետաղե անկյունը:

Մտածեցի՝ գուցե նրա անխռովությունը վե՞ր է սեռական տարբերություններից: Վեր՝ տղամարդու հանդեպ կենսաբանական նախատրամադրվածությունից: Վեր մշտական բնակավայրի բուն գաղափարից:

— Եվ վերջին հարցը: Միայն չբարկանաք: Ու եթե սխալվում եմ՝ անմիջապես մոռացեք... Մի խոսքով, այսպիսի մի ենթադրություն ունեմ... Դուք, պատահաբար, Պետական անվտանգության կոմիտեի աշխատակից չե՞ք:

Մտածում էի՝ չի բացառվում: Ի վերջո, նկատելի անձնավորություն էի: Անզուսպ: Բավական շատ էի խմում: Ավելորդ բաներ էի խոսում: Անունս հիշատակել էր «Նեմեցկայա վոլնա»-ն: Գուցե այս ֆանտաստիկ կնոջը կցել էին սկսնակ այլախոհի՞ս:

Այ հիմա, մտածում եմ, ափերից դուրս կգա: Իսկ եթե ճիշտ եմ՝ առավել ևս...

— Ոչ, — լսում եմ, — ես վարսավիրանոցում եմ աշխատում...

Քիչ անց.

— Եթե ուրիշ հարցեր չունեք, եկեք թեյ խմենք:

Այսպես էլ սկսվեց: Ցերեկը վազվզում էի պատահական վաստակի հույսով: Վերադառնում էի անտրամադիր, ստորացված ու չարացած: Լենան հարցնում էր.

— Թե՞յ, թե՞ սուրճ:

Չէինք զրուցում: Սոսկ միմյանց հաղորդում էինք հակիրճ գործնական տեղեկություններ: Նա, ասենք, փոխանցում էր.

— Ձեզ զանգել է ոմն Բեսկին . . .

Կամ .

— Լվացքի փոշին որտե՞ղ է . . .

Իմ գործերով չէր հետաքրքրվում: Ես էլ նրան հարցեր չէի տալիս: Խելագարությունը ամենօրյա, սովորական ուրվագծեր էր ձեռք բերում:

Որոշակի փոփոխություններ էր կրել օրվա ռեժիմը: Ծանոթ կանայք ավելի ու ավելի հազվադեպ էին զանգում: Անիմաստ է զանգել, երբ անխռով կանացի ձայն է պատասխանում:

Շարունակում էինք միմյանց միանգամայն անծանոթ մնալ:

Լենան աներեւակայելիորեն լռակյաց էր ու հանգիստ: Դա փչացած բարձրախոսի ճնշող լռությունը չէր: Եվ ոչ էլ հակատանկային ականի ահեղ լռությունը: Դա տերեւների անցողիկ շրշյունին անվրդով ականջ դնող արմատների լուռ հանգստություն էր . . .

Անցավ մեկ շաբաթ: Կիրակի առավոտյան չդիմացա: Ասացի . . . Ոչ՝ գոռացի .

— Լենա: Լսեք ինձ: Թույլ տվեք մինչեւ վերջ անկեղծ լինել: Մենք ամուսնական կյանքով ենք ապրում . . . Բայց՝ առանց ամուսնական կյանքի գլխավոր տարրի . . . Համատեղ տնտեսություն ենք վարում . . . Դուք լվացք եք անում . . . Կարո՞ղ եք բացատրել ինձ . . . Ես խելագարության շեմին եմ . . .

Լենան ինձ նայեց խաղաղ, բարեհամբույր հայացքով .

— Ես ձեզ խանգարո՞ւմ եմ: Ուզում եք, որ գնա՞մ:

— Ես չգիտեմ, ինչ եմ ուզում: Ես հասկանալ եմ ուզում . . . Սերը հասկանում եմ: Այլասերություն՝ հասկանում եմ: Ամեն ինչ հասկանում եմ . . . Ամեն ինչ, բացի այս կանոնակարգված խելագարությունից . . . Եթե պետանվտանգության գործակալ լինեիք՝ լավ . . . Ես նույնիսկ կուրախանայի . . . Ինչ-որ տրամաբանություն կլիներ . . . Իսկ այսպես . . .

Մի փոքր լռեց ու ասաց .

— Եթե պետք է, որ գնամ՝ ասեք:

Ու՝ հատակին ուղղելով նեղ մոնղոլական աչքերը .

— Եթե ուզում եք ԴԱ՝ խնդրեմ:

— Ի՞նչ ասել է՝ ԴԱ:

Թերթերունքներն ավելի ցած իջան: Ձայնն ավելի անխռով դարձավ .

— Նկատի ունեմ ինտիմ հարաբերությունները:

— Ոչ, — ասում եմ, — ինչի՞ համար:

Մի՞թե կհամարձակվեմ, մտածում եմ, այդքան կոպիտ կերպով խախտել այդ հանգստությունը:

Երկու շաբաթ էլ անցավ: Ինձ փրկեց օղին: Խմել էի մի առաջադեմ խմբագրությունում: Տուն հասա մեկի մոտերքը: Եվ, այսպես ասած, մոռացության մեջ... հանդգնեցի... Գնացի ապագա կալանավոր Գուրևիչի սխալ ճանապարհով...

Գցածս քարը պառկած մնաց օվկիանոսի հատակին...

Դա սեր չէր: Ոչ էլ, առավել ևս՝ րոպեական թուլություն: Դա քաոսից պաշտպանվելու փորձ էր:

Նույնիսկ «դու»–ի չանցանք:

Իսկ մեկ տարի անց ծնվեց Կատյան: Այդպես էլ ծանոթացանք...

Որպես ամուսին խիստ կասկածելի ձեռքբերում էի: Տարիներով մշտական աշխատանք չունեի: Որակազրկված ցլամարտիկի խղճահարույց արտաքին ունեի:

Պատմվածքներս չէին տպագրում: Գնալով ավելի չար ու պակաս զգույշ էի դառնում: Յոթանասուն թվականի ամռանը առաջին պատմվածքներս հասան Արևմուտք:

Սկսեցի շփվել արտասահմանցիների հետ: Նստում էինք մինչև ուշ գիշեր: Օղի էինք խմում՝ էժանագին երշիկով:

Կոմունալ հարևան Տիխոմիրովը սպառնալի փնթփնթում էր.

— Այս ի՞նչ ծանոթներ ունեք: Սինյավսկու և Դանիելի տիպի...

Նույն թվականի աշնանը անունս հիշատակեցին արևմտյան ռադիոկայանները:

Լենային պատմվածքներս չէին հետաքրքրում: Գործունեությունը որպես այդպիսին նրան առհասարակ չէր հետաքրքրում: Նրա սահմանափակությունն, ըստ իս, մաս էր կազմում իր անսահման հանգստության:

Կյանքս, այսպիսով, երկու հակամարտ տարերքների ազդեցության տակ էր անցնում: Ձախից փոթորկվում էր կազմավորվող նոնկոմֆորմիզմը: Աջից տարածվում էր քաղքենիական բարեկեցության անխռով օվկիանոսը:

Այդպես էլ, սայթաքելով, քայլում էի այդ երկու օվկիանոսների միջև ընկած նեղ արահետով:

Լենան այդ ընթացքում ազատվեց վարսավիրանոցից: Աշխատանքի տեղավորվեց «Սովետսկի պիսատել» հրատարակչությունում՝ որպես սրբագրիչ: Ինչը անակնկալ էր ինձ համար: Ես չգիտեի, որ նա այդ աստիճան գրագետ է: Հետագայում պարզվեց, որ շատ բան չգիտեի: Ու չգիտեմ մինչև օրս...

Մեկ տարի անց Լենան բախվեց իշխանությունների հետ: Այսպես պատահեց:

Հրատարակչությունում լույս էր տեսել Ախմատովայի ժողովածուն: Աշխատակիցներին սահմանափակ թվով օրինակներ էին տրամադրել: Որոշ մարդիկ ցուցակից դուրս էին մնացել: Այդ թվում՝ կինս:

Լենան գնացել էր հրատարակչության տնօրենի մոտ: Արտահայտել էր իր դժգոհությունը: Կոնդրաշովն ի պատասխան ասել էր՝ իջեցնելով ձայնը .

— Դուք չեք ըմբռնում քաղաքական բարդ կոնտեքստը: Տպաքանի մեծ մասը ուղարկվել է արտասահման: Մենք պարտավոր ենք փակել բուրժուական պրոպագանդայի բերանը:

— Իմը փակեք, — խնդրել էր Լենան . . .

Մեր միջեւ առաջացավ որոշակի այլախոհական փոխըմբռնում . . .

Տարիներն անցնում էին: Մեր դուստրը մեծանում էր: Ճապոնական ռադիոընդունիչիս մասին ասում էր .

— Ես քո «բիբիսի»-ն լուսամուտի մոտ եմ դրել:

Ապրում էինք աղքատ, հաճախ էինք կռվում: Ես ափերիցս դուրս էի գալիս, կինս լռում էր:

Լռությունը զորեղ ուժ է: Այն արգելել է պետք՝ որպես բակտերիալոգիական զենք . . .

Ես անդադար բողոքում էի հեռանկարի բացակայությունից: Լենան ասում էր .

— Գրիր երկու հազար պատմվածք: Մեկնումեկը կտպեն . . .

Այս ի՞նչ է ասում, մտածում էի: Մեկ պատմվածքը ի՞նչ է փոխելու:

Նույնսիկ վիրավորվում էի:

Իզուր . . .

Մեր մասշտաբներն ու համամասնություններն էին տարբեր: Ես շեշտը դնում էի միավորի վրա: Լենան՝ բազմության . . .

Ճիշտը ինքն էր: Հաղթել կարելի է բացառապես բազմությամբ: Ամբողջ համաշխարհային պատմությունը դրա ապացույցն է . . .

Ես այնքան քիչ գիտեի կնոջս մասին, որ միշտ զարմանում էի: Ինձ զարմացնում էր նրա հանգստության ցանկացած խախտում:

Մի անգամ լաց եղավ, որովհետեւ նրան ստորացրել էին տնային կառավարչությունում: Անկեղծ ասած՝ նույնիսկ ուրախացա: Ուրեմն, նրա մեջ կրքեր, այնուամենայնիվ, հնարավոր է արթնացնել...

Դա, սակայն, խիստ հազվադեպ էր պատահում: Նա գրեթե միշտ հանգիստ էր ու անխռով...

Յոթանասունական թվականներին սկսվեց արտագաղթը: Մեկնում էին ամենամոտ ընկերներս: Բոլոր խոսակցություններն այդ մասին էին: Իսկ ես ասում էի.

— Ի՞նչ եմ անելու այնտեղ: Անհեթեթ է սեփական տնից փախչելը: Եթե գրականությունը դատապարտելի զբաղմունք է մեր տեղը բանտն է...

Լենան լռում էր: Թերևս ավելի լռակյաց էր դարձել: Օրերն անցնում էին անվերջ հրաժեշտի սեղանների շուրջ... Լավ հիշում եմ փետրվարյան այդ օրը: Լենան աշխատանքից տուն եկավ ու ասաց.

— Վերջ... մեկնում ենք... Զզվել եմ...

Առարկելու երկչոտ փորձ արեցի: Խոսեցի հայրենիքի, Աստծո, սոցիալական ճնշման առավելությունների, լեզվական ու կոլորիստական ամբողջականության մասին: Նույնիսկ կեչիները հիշատակեցի, ինչը երբեք չեմ ների ինձ...

Լենան, սակայն, արդեն զանգում էր ինչ-որ մեկին...

Բարկացա ու մեկ ամսով մեկնեցի Պուշկինյան արգելոց: Վերադարձիս Լենան մի կապ փաստաթուղթ տվեց՝ ստորագրելու:

— Արդե՞ն, — հարցրի:

— Այո, — ասաց, — Վճռված է: Փաստաթղթերն արդեն ձեռքիս են: Մեզ, համոզված եմ, կթողնեն: Դա կարող է տեղի ունենալ երկու շաբաթվա ընթացքում:

Ես շփոթվեցի: Չէի կարծում, թե այդքան արագ կլինի: Ավելի ճիշտ՝ կարծում էի, թե Լենան սկսելու էր համոզել ինձ:

Չէ՞ որ ե՛ս էի ատում խորհրդային ռեժիմը: Ի՛մ պատմվածքները չէին տպագրում: Ե՛ս էի գրեթե այլախոհ համարվում...

Եկավ մեկնելու օրը: Օդանավակայանում մի ամբողջ ամբոխ էր հավաքվել: Հիմնականում խմիչքի սիրահար ընկերներս:

Հրաժեշտ տվինք միմյանց: Լենան միանգամայն անխռով էր: Ազգականներիցս մեկը նրան սև աղվեսի մորթի էր նվիրել: Հետո երկար ժամանակ երազում տեսնում էի աղվեսի բաց երախը...

Դուստրս անճոռնի հայրենական կոշիկներով էր: Տեսքը շփոթված էր: Այդ տարի բոլորովին տգեղ էր:

Հետո նրանք ավտոբուս նստեցին:

Սպասեցինք, որ ինքնաթիռը օդ բարձրանա: Սակայն մեկնող ինքնաթիռները շատ էին: Դժվար էր հասկանալ, թե որն է մերը . . .

Կարոտել սկսեցի արդեն օդանավակայանից վերադառնալիս: Տաքսիում խմում էի ուղղակի շշից: Վարորդն ասում էր .

— Կռացեք:

— Կռացած չի խմվում, — պատասխանում էի:

Կյանքս այդ օրվանից փոխվեց: Շատ անհանգիստ դարձա: Մտածել կարողանում էի միայն մեկնելու մասին: Խմում ու մտածում էի:

Լենան մեզ բացիկներ էր ուղարկում: Դրանք ծածկագրված զեկուցագրերի էին նման:

«Հռոմը գեղեցիկ, մեծ քաղաք է: Ցերեկներն այստեղ շոգ է: Երեկոները երաժշտություն է հնչում: Կատյան առողջ է: Գները համեմատաբար ցածր են» . . .

Այդ բացիկները լի էին հանգստությամբ: Մայրս անդադար վերընթերցում էր դրանք: Փորձում էր զգացմունքի որեւէ նշույլ գտնել: Ես հո գիտեի, որ անիմաստ է . . .

Հետագա իրադարձությունները շարադրում եմ շատ հակիրճ:

Պորտաբուծության մեղադրանք . . . Քաղաքից չբացակայելու ստորագրություն . . . Քննիչ Միխայլովը . . . Անհասկանալի ծեծ միլիցիայում . . . «Նեմեցկայա վոլնա»-ի հաղորդաշարը . . . Ձերբակալություն ու դատ Տոլմաչովի փողոցում . . . Ինը օր Կալյաեւյան բանտում . . . Անսպասելի ազատ արձակում . . . ՕՎԻՌ . . .

ՕՎԻՌ-ի գնդապետը քաղաքավարի էր ու բարեհամբույր .

— Դուք պետք է մեկնեք: Ձեր կինը արդեն մեկնել է, եւ դուք էլ պետք է մեկնեք . . .

Հակառակվելու համար ասացի .

— Մենք գրանցված չենք:

— Դա ձեւականություն է, — լայն ժպիտով ասաց գնդապետը, — իսկ մենք ձեւապաշտ չենք: Չէ՞ որ դուք նրանց սիրում եք:

— Նրանց ո՞ւմ:

— Ձեր կնոջն ու դստերը . . . Դե, իհարկե, սիրում եք . . .

Այսպես փաստ դարձավ կնոջս ու դստերս հանդեպ սերը: Եվ փաստողը ՆԳՆ գնդապետ էր . . .

Ես փորձում էի կողմնորոշվել: Աշխարհում երկու իրական բեւեռ կար: Հստակ, հարազատ, հեղձուցիչ ԱՅՍՏԵՂ-ը եւ անիմաստ, կիսաֆանտաստիկ ԱՅՆՏԵՂ-ը: Տանջալի կյանքի անծայրածիր հորիզոններ բարեկամների ու թշնամիների շրջապատում՝ այստեղ, եւ ընդամենը կինս, անխռով հանգստությամ իր փոքրիկ կղզյակը՝ այնտեղ:

Բոլոր հույսերն այնտեղ էին: Չգիտեմ ինչու էի ՕՎԻՌ-ի գնդապետի գլուխը տանում...

Վեց շաբաթ հետո Ավստրիայում էինք: Վիեննան ասես Լենինգրադի թաղամասերից մեկը լիներ: Ֆոնտանկայի ու Սադոկայայի միջև:

Քաղաքային բնապատկերի միակ նշանակալի տարրը գետն էր: Գետը, որ, ինչպես պարզվեց երրորդ թե չորրորդ օրը, Դանուբն էր:

Գորշ փողոցներում աչքի էին զարնում պոռնիկները: Նրանք նման էին արտասահմանյան կինոկատակերգությունների հերոսուհիների:

Ապրում էինք «Ադմիրալ» հյուրանոցում: Մայրս առավոտից գիշեր Սոլժենիցին էր կարդում: Ես գրում էի էմիգրանտական թերթերի ու հանդեսների համար: Հիմնականում նկարագրում էի մտացածին այլախոհական սխրանքներս:

Լենան արդեն Ամերիկայում էր: Նրա նամակներն ավելի հակիրճ էին դարձել.

«Աշխատում եմ որպես մեքենագրուհի: Կատյան դպրոց է գնում: Թաղամասը համեմատաբար անվտանգ է: Տանտերը հաճելի, տարեց ամերիկացի է: Անունը Էնդրյու Կովալենկո»...

Ավստրիայում ապրեցինք մինչև ամառ: Վիեննան միջանկյալ կետ էր Լենինգրադի ու Ամերիկայի միջև: Այդպիսի հեռավորությունը, հավանաբար, կարելի է կտրել միայն երկու ոստյունով:

Վերջապես ստացանք ամերիկյան փաստաթղթերը: Օվկիանոսի վրա անցկացրած յոթը ժամը հավերժություն թվաց: Տարածությունը որպես այդպիսին որևէ հետաքրքրություն չի պարունակում:

Ինքնաթիռը ամերիկյան տարածք էր: Ուղեկցորդուհիների պահվածքն անկախ էր:

Քենեդիի անվան օդանավակայանում մեզ դիմավորեցին մեր ծանոթները: Հանրահայտ լուսանկարիչ Կուլակովը՝ կնոջ ու որդու հետ: Ողջույնի խոսքերից անմիջապես հետո սկսեցին հայհոյել Ամերիկան:

— «Տոյոտա» կառնես, ծերուկ, — ասում էր Կուլակովը, — ավելի լավ է՝ «Ֆոլքսվագեն»: Ամերիկյան մեքենաները զիբիլ են...

— Իսկ որտե՞ղ են Լենան ու Կատյան, — հարցրի: Կուլակովը մեկնեց քառածալ գրությունը.

«Տեղավորվեք: Մենք Առողջության ակումբում ենք: Կգանք ութից հետո: Ուտելիքը սառնարանում է: Լենա»:

Շարժվեցինք դեպի տուն, դեպի Ֆլեշինգ: Շրջապատող բնապատկերը հիշեցնում էր Լենինգրադի արվարձանները: Երկնաքերները բացակայում էին:

Մայրս դուրս նայելով ասաց .

— Փողոցը լրիվ դատարկ է . . .

— Սա փողոց չէ, — առարկեց Կուլակովը, — հայվեյ է:

— Ի՞նչ է նշանակում հայվեյ, — հարցրեց մայրս:

— Մայրուղի, — ասացի:

Լենան զբաղեցնում էր ոչ մեծ աղյուսաշեն տան առաջին հարկը: Կուլակովը օգնեց ներս բերել ճամպրուկը: Հետո ասաց .

— Հանգստացեք: Եվրոպայում արդեն գիշեր է: Վաղը կգանգեմ . . .

Ու հեռացավ:

Ես, իհարկե, չէի ակնկալում, թե ինձ դիմավորելու են ամերիկյան գրողների պատվիրակությունը: Բայց Լենան, իմ կարծիքով, կարող էր գալ օդանավակայան . . .

Մնացինք դատարկ բնակարանում: Երկու սենյակներում ուղղակի հատակին ներքնակներ էին դրված: Հագուստեղենը ընկած էր ամենուր:

Մայրս բացեց սառնարանն ու ասաց .

— Պանիր համարյա նույնն է, ինչ մեզ մոտ . . .

Հանկարծ անասելի հոգնածություն զգացի: Պառկեցի ներքնակին ու ծխեցի: Իրականության ուրվագծերը աղոտացան:

Ո՞վ եմ ու որտեղի՞ց եմ եկել: Ի՞նչ է գալիս գլխներիս: Եվ վերջն ի՞նչ է լինելու . . .

Նոր կյանքը չափազանց առօրեականության էր նշանակալի փոփոխությունների համար:

Մտածեցի նաեւ .

«Ինչպե՞ս է առաջանում մարդկային մտերմությունը: Ի՞նչ է հարկավոր մարդկանց միջեւ հարազատության զգացմունքի համար» . . .

Արթնացա վաղ առավոտյան: Քամուց օրորվող ճյուղը դիպչում էր պատուհանի ապակուն: Զգացի, որ մենակ չեմ:

— Ո՞վ կա, — հարցրի:

— Լենան, — պատասխանեց հանգիստ կանացի ձայնը:

Քիչ անց .

— Շատ ես գիրացել: Հարկավոր է առավոտները վազել:

— Էլ ո՞ւր վազեմ, — ասում եմ, — վազքս, գործնականում, վերջացավ... Կուզենայի մնալ այստեղ: Հուսով եմ, հնարավո՞ր է...

— Իհարկե: Եթե սիրում ես մեզ...

— Գնդապետն ասաց, որ սիրում եմ:

— Եթե սիրում ես՝ մնա: Մենք դեմ չենք...

— Սերն այստեղ կապ չունի, — ասացի:

Եվ ավելացրի.

— Սերը դեռահասների համար է... Իսկ այստեղ արդեն սեր չէ՝ ճակատագիր է... Իսկ ո՞ւր է Կատյան:

— Խսիրի վրա՝ տատիկի հետ...

Հետո Լենան ասաց.

— Շրջվիր:

Դեմքս ծածկեցի ամերիկյան լրագրով:

Լենան վեր կացավ, հագավ խալաթն ու հարցրեց.

— Թե՞յ, թե՞ սուրճ:

Այստեղ հայտնվեց Կատյան: Բայց դա արդեն ուրիշ թեմա է...

ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Մի ժամանակ նա ընդհանրապես չկար: Թեեւ չեմ կարողանում պատկերացնել դա: Առհասարակ, կարելի՞ է պատկերացնել այն, ինչ չի եղել: Հետո նրան տուն բերեցինք: Վարդագույն, անսպասելիորեն թեթեւ ժանյակավոր փաթեթեում:

Ուշագրավ է՝ Կատյայի մանկությունը ավելի վատ եմ հիշում, քան իմը:

Հիշում եմ, լուրջ հիվանդ էր: Եթե չեմ սխալվում՝ թոքերի բորբոքում էր: Տարան հիվանդանոց: Մորն ու տատին ներս չէին թողնում: Վտանգավոր իրավիճակ էր: Չգիտեինք ինչ անել:

Ի վերջո, գլխավոր բժիշկը կանչես մեզ: Փնթի ու նույնիսկ խմած մարդ էր: Ասաց .

— Ձեր մորն ու կնոջը մենակ չթողեք: Նրանց կողքին եղեք . . .

— Ի՞նչ եք ուզում դրանով ասել . . .

— Հնարավոր ամեն բան կանենք, — ասաց բժիշկը:

— Կնոջս ներս թողեք:

— Չի կարելի, — ասաց նա:

Ահավոր օրեր էին: Անցնում էի հեռախոսի մոտ: Թվում էր, թե դժբախտության հիմնական մեղավորը այդ սեւ ապարատն էր: Անընդհատ զանգում էին օտար, ուրախ մարդկիկ: Մայրս հաճախ դուրս է գալիս աստիճանահարթակ՝ լացելու:

Մի անգամ աստիճաններով բարձրանալիս է լինում մորս հին ծանոթներից մեկը: Դերասան Մերկուրեւը: Ժամանակին միասին աշխատել էին: Մայրս պատմում է մեր դարդերը: Մերկուրեւը գրպանները փորփրում, երկու կոպեկանոց է գտնում: Ավտոմատից զանգում է .

— Մերկուրեւն է խոսում: Նորկային թույլ տվեք մտնել հիվանդանոց . . .

Անմիջապես թույլ տվեցին: Իսկ հետո կնոջս էլ թույլատրեցին հերթապահել գիշերները: Այնպես որ խորհրդային պետության դեմ պայքարելու միակ զենքը անհեթեթությունն է . . .

Մի խոսքով, դուստրս մեծանում էր: Գնում էր մանկապարտեզ: Երբեմն ես էի տուն բերում: Հիշում եմ սպիտակ փայտե նստարանը: Եվ մանկական հագուստի կույտը . մեծահասկաների հագուստի կտորներն այդքան շատ չեն . . . Հիշում եմ փոքրիկ կոշիկի հետեւի ծալված մասը . . .

Հետո քայլում էինք փողոցով: Հիշողությանս մեջ մնացել է ափումս փոքրիկ, շարժուն ափի զգացողությունը: Անգամ ձեռնոցի միջից զգամ էր իր ջերմությունը:

Ինձ ապշեցնում էր իր անօգնականությունը: Իր խոցելիությունը տրանսպորտի, քամու հանդեպ... Իր կախվածությունը իմ որոշումներից, գործողություններից,

խոսքերից...

Մտածում էի դեռ քանի՞ տարի է այսպես շարունակվելու: Ու ինքս ինձ պատասխանում՝ մինչև վերջ...

Հիշում եմ մի զրույց գնացքում: Պատահական ուղեկիցս այսում էր.

«... Տղա էի ուզում: Սկզբում տխրեցի: Հետո տեսա, որ աղջիկն էլ ոչինչ: Եթե տղա ունենայի՝ հանձնվելու էի: Դատելու էի այսպես, ինքս կյանքում քիչ բանի եմ հասել: Որդիս ավելիին կհասնի: Ես կփոխանցեմ նրան իմ անհաջողությունների փորձը: Նա կդառնա առնական ու նպատակամղված տղամարդ: Ու ես կապրեմ որդուս մեջ: Այսինքն՝ կմեռնեմ...

Դստեր դեպքում միանգամայն այլ է: Ես նրան պետք եմ ու պետք եմ լինելու մինչև վերջ: Նա թույլ չի տա, որ մոռանամ իրեն»...

Դուստրս մեծանում էր: Արդեն երևում էր աթոռի հետևից:

Հիշում եմ, մանկապարտեզից վերադարձավ: Առանց հանվելու, հարցրեց.

— Դու Բրեժնևին սիրո՞ւմ ես:

Մինչ այդ նրա դաստիարակությամբ չէի զբաղվել: Ընկալում էի նրան որպես թանկարժեք անշունչ առարկա: Եվ ահա՝ ինչ-որ բաներ պիտի ասեի, բացատրեի...

Ես ասացի.

— Սիրել կարելի է նրանց, ում լավ ճանաչում ես: Օրինակ՝ մայրիկին, տատիկին: Ծայրահեղ դեպքում՝ ինձ: Բրեժնևին մենք չենք ճանաչում, թեև դիմանկարները հաճախ ենք տեսնում: Հնարավոր է, որ լավ մարդ է: Հնարավոր է՝ ոչ: Ինչպե՞ս կարելի է սիրել անծանոթ մարդուն...

— Իսկ մեր դաստիարակները նրան սիրում են, — ասաց դուստրս:

— Երևի ավելի լավ են ճանաչում:

— Ոչ, — ասաց Կատյան: — Որովհետև նրանք դաստիարակներ են, իսկ դու ընդամենը սովորական հայրիկ...

Հետո սկսեց շատ արագ մեծանալ: Դժվար հարցեր էր տալիս: Թերևս հասկացել էր, որ ձախողակ եմ: Երբեմն հարցնում էր.

— Ինչո՞ւ քո պատմվածքները չեն տպում:

— Չեն ուզում:

— Իսկ դու շան մասին պատմվածք գրիր:

Աղջկաս երեւի թվում էր, որ շան մասին հանճարեց կգրեմ:

Այդ ժամանակ հեքիաթ հորինեցի .

«Լինում է, չի լինում մի նկարիչ է լինում: Կանչում է նրան թագավորն ու ասում .

— Ինձ համար մի նկար նկարիր: Եթե հավանեմ, քաշովդ մեկ ոսկի կտամ:

— Իսկ ի՞նչ նկարեմ, — հարցնում է նկարիչը:

— Ինչ ուզում ես, — ասում է թագավորը, — բացի գորշ բզեզից:

— Մնացած ամեն ինչ կարելի՞ է, — ապշում է նկարիչը:

— Իհարկե: Ամեն ինչ, բացի գործ բզեզից:

Նկարիչը գնում է տուն:

Մեկ տարի է անցնում: Երկու տարի: Երեք տարի: Թագավորն անհանգստանում է: Հրամայում է գտնել ու իր մոտ բերել նկարչին:

— Ի՞նչ եղավ խոստացածդ նկարը, — հարցնում է:

Նկարիչը լուռ խոնարհում է գլուխը:

— Պատասխանիր, — հրամայում է թագավորը:

— Չեմ կարողանում նկարել:

— Ինչո՞ւ:

Երկար լռությունից հետո նկարիչն ասում է .

— Մտածում եմ միայն գորշ բզեզի մասին» . . .

— Հասկացա՞ր, թե ինչու պատմեցի:

— Այո:

— Ի՞նչ հասկացար:

— Երեւի նրան լավ չէր ճանաչում:

— Ո՞ւմ:

— Բզեզին:

Հետո մեր դուստրը դպրոցական դարձավ: Բավական լավ էր սովորում: Թեեւ վառ ունակություններ չէր դրսեւորում:

Սկզբում տխրեցի: Իսկ հետո հանգստացա: Տաղանդավոր մարդկանց կյանքը դժբախտությունների անվերջ շարան է . . .

Կատյայի կյանքն ընթանում էր առանց շոշափելի դրամաների: Դպրոցում նրան չէին նեղացնում: Ես նրա տարիքում շատ ավելի ամոթխած էի: Նա, այնուամենայնիվ, ե՛ւ մայր ուներ, ե՛ւ հայր: Դեռ՝ տատիկ ու շուն էլ:

Ինձ դուստրս լավ էր վերաբերում: Մի քիչ կարեկցանք, մի քիչ քամահրանք: (Ես, ախր, էլեկտրականությունից ոչինչ չէի հասկանում: Նաև՝ քիչ էի վաստակում...):

Լենինգրադի բոլոր դպրոցականների պես նա բավական զարգացած էր: Գիտեր իշխանությունների հանդեպ վերաբերմունքիս մասին: Եթե հեռուստատեսությամբ Բրեժնևի ելույթն էին հաղորդում, Կատյան ուշադրությամբ նայում էր ինձ...

Ինձ ասում էր.

— Ինչո՞ւ չես հագնվում:

Երևի ֆիզիկապես տհաճ էի իրեն: Գուցե այդպես էլ պետք է լինի: Երեխաներին բնորոշ է նման հակակրանքը: (Ծնողներին՝ երբեք): Բնավորությունը սկսեց վատանալ: Նրան կակտուս նվիրեցի: Այսպիսի բանաստեղծություն գրեցի.

Որքան է մեր դստրիկը

Հիշեցնում այս ծաղիկը.

«Սիրեմ թե չսիրեմ,

Միևնույն է կծակեմ»...

Յոթանասունութ թվականին արտագաղթեցինք: Նախ մեկնեցին կինս ու դուստրս: Դա ապահարզան էր: Թեև պաշտոնապես բաժանվել էինք դեռ մի քանի տարի առաջ: Բաժանվել, բայց շարունակում էինք տանջել միմյանց: Ու վերջը չէր երևում:

Կատյան նրա հետ մեկնեց: Ու դա բնական էր: Իսկ ես մնացի մորս ու Գլաշայի հետ:

Ես չէի ուզում մեկնել: Ավելի ճիշտ՝ գիտեի, որ դեռ վաղ է: Հարկավոր էր նախապատրաստել ձեռագրերս: Սպառել ինչ-որ հնարավորություններ: Կամ գուցե՝ հասնել վերջին կետին: Այն շեմին, որից այն կողմ խելագարությունն է:

Ու մնացի: Մայրս հետս մնաց: Դա նույնպես բնական էր:

Կնոջս ու դստերս մեկնելուց հետո իրադարձությունները արագացված զարգացում ունեցան: Ինչպես շնչակտուր վերջին էջերը գրող սկսնակ հեղինակի

վեպում:

Ինձ ամեն տեղից վռնդել էին: Զրկել էին վաստակելու վերջին հնարավորություններից: Ավելի ու ավելի շատ էի խմում:

Հետո՝ անհասկալի ծեծերը միլիցիայում: (Դրանք մետաֆիզիկապես կընկալեի, եթե երկու անգամ կրկնված չլինեին:) Մեկ շաբաթ Կալյանյան բանտում: Եվ վերջապես՝ ՕՎԻՌ, մաքսատուն, վիեննական նրբերշիկ...

Չորրորդ տարին է ապրում եմ Ամերիկայում: Կրկին միասին ենք: Թեեւ պաշտոնապես դեռ բաժանված ենք:

Դստերս հետ հարաբերությունները նույնն են: Ինչպես եւ նախկինում, զուրկ եմ այն ամենից, ինչն ընդունակ է նրան նվաճել:

Ամերիկյան երգիչ հազիվ թե դառնամ: Կամ կինոդերասան: Կամ թմրավաճառ: Հազիվ թե այնքան հարստանամ, որ կարողանամ ապահովել նրա անհոգ կյանքը:

Բացի դրանից, մեքենա առաջվա պես չեմ վարում: Ռոք երաժշտությամբ չեմ հետաքրքրվում: Իսկ ամենակարեւորը՝ անգլերեն վատ եմ խոսում:

Վերջերս Կատյան ասաց . . . Ավելի ճիշտ՝ արտաբերեց . . . Չեմ կարողանում ճշգրիտ ձեւակերպել . . . Մի խոսքով լսեցի .

— Քեզ, ահա, սկսել են տպագրել: Իսկ ի՞նչ է փոխվել:

— Ոչինչ, ասացի, — ոչինչ . . .

ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՐԴ . ՎԵՐՋԱԲԱՆ

Ձեր առջև ընտանիքիս պատմությունն է: Հուսով եմ՝ նման է բազմաթիվ այլ ընտանիքների պատմություններին: Մնացել է ավելացնել սոսկ մի քանի բառ: 1981 թվականի դեկտեմբերի 23-ին Նյու Յորքում ծնվեց որդիս: Նա ամերիկացի է, Միացյալ Նահանգների քաղաքացի: Անունը, պատկերացրեք, միստեր

Նիկոլաս Դոուլի է:

Ահա թե ինչի հասավ իմ ընտանիքն ու մեր հայրենիքը: